«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

# Ավարտական հետազոտական աշխատանք

***Թեմա՝*** Սաների մեջ ինքնուրույնության ,նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում

***Հաստատություն՝*** *Երևանի թիվ 99 մսուր-մանկապարտեզ*

***Դաստիարակ՝*** *Հաջաթյան Գայանե*

***Ղեկավար՝*** *Ժաննա Ավետիսյան*

ԵՐՎԱՆ 2023

# Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 2
ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ..... 5
1.1 Ինքնուրույնության ձևավորման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում ..... 5
1.2 Նախադպրոցականի ինքնուրույնության դրսևորման մանկավարժական վերլուծությունը գործունեության տարբեր ձևերում ..... 12
ԳԼՈՒԽ 2 ՄԻՋԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ, ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 17
ԳԼՈՒԽ 3. ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ..... 20
3.1 Փորձարարական հետազոտության նպատակը, խնդիրները ..... 20
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 25
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ..... 26

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հետազոտության արդիականությունը:** Մեր իրականության մեջ տեղի ունեցող կրթական բարեփոխումները նոր պահանջներ են ներկայացնում և նոր խնդիրներ դնում նախադպրոցական կրթության համակարգի առջև: Նախադպրոցականի դաստիարակության ժամանակակից հայեցակարգի առաջնահերթությունների համաձայն՝ երեխայի լիարժեք զարգացման, հասարակության նոր պայմաններին հարմարվելու և դժվարությունները հաղթահարելու, հետագայում սեփական կյանքը կարգավորելու գործընթացներում էական դեր են խաղում այն բարոյա-կամային հատկությունները, որոնք ձեռք են բերվում դեռևս նախադպրոցական տարիքում: Մարդկային հարաբերությունների և գործունեության բովանդակությունը կապված է այնպիսի անձնային որակների հետ, ինչպիսիք են ակտիվությունն ու նախաձեռնողականությունը, ինքնուրույնությունն ու սկզբունքայնությունը:

Անձի ձևավորման սկիզբը՝ նախադպրոցական տարիքն է: Վարքի, բնավորության գծերի, անձի տարբեր հատկությունների զարգացման հիմքերը դրվում են հենց այս տարիքում:

Նախադպրոցականի ինքնուրույնության դաստիարակության խնդրին բազմիցս անդրադարձել են հայրենական և արտասահմանյան մի շարք գիտնականներ՝ Ս. Ա. Մարությանը, Լ.Ի. Բոժովիչը, Վ.Ա. Գորբաչյեվան,Վ.Ս. Մուխինան, Ժ. Պիաժեն, Լ.Կոլբերգը, Ջ. Ռոտերը և ուր., որոնք փորձել են տարբեր տեսանկյուններից նկարագրել նշված անձնային հատկության ձևավորման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում: Նրանք նշել են, որ պատասխանատվության դաստիարակության համար ամենասենզիտիվ շրջանը՝ ավագ նախադպրոցական տարիքն է, քանի որ այդ տարիքում են երեխաները սկսում գիտակցել կամային ջանքեր գործադրելու անհրաժեշտությունը և դրսևորել նպատակներին հասնելու պատրաստակամություն: Նախադպրոցական տարիքում երեխան՝ինքնուրույնության, ակտիվության և սեփական որոշումներն իրագործելու ցանկության շնորհիվ, սկսում է հասկանալ, որ ինքն է իր գործունեության հեղինակը և փորձում է պատասխան տալ սեփական գործողությունների համար: Աստիճանաբար

ձևավորվում են պատասխանատու վարքի դրսևորումներ, որոնք կուտակվում են սեփական սոցիալական փորձի ձևով, հետագայում վերածվելով ինքնավերլուծության սովորության: Պատասխանատու միջին նախադպրոցականի գլխավոր առավելությունը կայանում է նրանում, որ նա ընդունակ է վերլուծելու սեփական հաջողություններն ու վրիպումները, գիտակցելով, որ ինքն է իր գործունեության հեղինակը, հետևաբար և պատասխանատուն:

Մեր ուսումնասիրության **արդիականությունը** պայմանավորված է ավագ նախադպրոցական տարիքում ինքնուրույնության դաստիարակության ժամանակակից մոտեցումների և մեթոդիկայի մշակման անհրաժեշտությամբ:

Աշխատանքի **նպատակն է** ուսումնասիրել միջին նախադպրոցականների ինքնուրույնության դրսևորման առանձնահատկությունները, մշակել ինքնուրույնության դաստիարակության մանկավարժական պայմաններ և առաջարկել մեթոդական հանձնարարականներ:

**Հետազոտության նպատակից բխում են հետևյալ խնդիրները.**

1. վերլուծել հիմնախնդրի շուրջ հոգեբանամանկավարժական գրականություն;
2. ուսումնասիրել ինքնուրույնության ձևավորման առանձնահատկությունները միջին նախադպրոցական տարիքում;
3. Մշակել համապատասխան մեթոդական հանձնարարականներ
4. Կազմակերպել և իրականացնել նկարչության պարապմունք

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ հոգեբանամանկավարժական գրականության վերլուծություն, դիտարկումներ և անհատական զրույցներ,փորձարարական աշխատանք;

# ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

## 1.1 Ինքնուրույնության ձևավորման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Կամային ոլորտի զարգացումը նախադպրոցական տարիքում ոչ միայն պայմանավորում է երեխայի սահուն մուտքը կրթական համակարգի հաջորդ աստիճան՝դպրոցական ուսումնառության հաջողությունը, այլև ապահովում է առավել կարևոր մի բան՝ նպաստում է կյանքի դիրքորոշումների և անձնային հատկությունների ձեռքբերմանը, որոնք իրենց հերթին որոշիչ դեր են խաղում մարդու կյանքում: Կամային ոլորտը սերտորեն կապված է մի կողմից հուզական ոլորտի, մյուս կողմից՝ բարոյականության հետ: Հուզակամային և բարոյակամային հատկությունների փոխկապակցված ձևավորման արդյունքում են արդեն նախադպրոցական տարիքում գոյանում արժեքային ուղենիշներ, որոնք առաջնորդում են յուրաքանչյուրին կենսագործունեության ընթացքում:

Կամային հատկությունների դաստիարակութունը կախված է նրանից, թե ինչպես են դաստիարակող մեծահասակները ուղղորդում երեխայի գործունեությունն ու վարքը: Հնարավոր չէ մեխանիկորեն վարժեցնել ինքնուրույն գործելու ունակություններ: Անհրաժեշտ է խրախուսել, առաջացնելով ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, իր առջև ծառացած խնդիրները ինքնուրույն լուծելու ցանկություններ: Պետք է ատեղծել նաև այնպիսի իրադրություն, որ երեխան ձգտի ինքնուրույն հասնել դրված նպատակներին, ինչպես և սովորի իր առջև դնել նպատակ և լուծել այն կամ առաջացած խնդիրը:

Վարքագծի ինքնուրույնությունը ձևավորվում է այն դեպքում, երբ առաջանում են համապատասխան կայուն սուվորություններ, որոնք անհրաժեշտ են սեփական փորձից ելնելով գործելու համար և որոնք ժամանակի ընթացում դառնում են բնավորության կայուն գծեր: Ձեռքբերած վարքի ձևերը դրսևորվում են ցանկացած իրադրություններում, անկախ գործունեության տեսակից, մասնակիցների

փոխհարաբերություններից, դրանք ապահովում են հաջողություն նպատակին հասնելու ճանապարհին:

Ա.Ա. Լյուբինսկայան առանձնացնում է նախադպրոցականի կամային հատկությունների, առավելապես ինքնուրույնության զարգացման երեք աստիճան:Առաջին՝ ինքնուրույնության դրսևորման ցածր աստիճանի դեպքում երեխան գործում է ինքնուրույն իր համար սովորական պայմաններում: Երկրորդ՝ ինքնուրույնության դրսևորման միջին աստիճանի դեպքում, նա սկսում է կիրառել իր համար սովորական դարձած գործոցությունները, միջոցներն ու հնարներն անսավոր պայմաններում: Այդ պայմանները որոշ չափով նման են սովորական պայմաններին: Զարգացման ամենաբարձր, երրորդ աստիճանի ժամանակ նախադպրոցականը սկսում է դրսևորել իր գիտելիքները, գործելու յուրացրած միջոցները բացարձակ անծանոթ պայմաններում: Այս դեպքում գործելու յուրացրած միջոցները կրում են ընդհանրացված բնույթ և չափանիշ են դառնում երեխայի համար: Այսպես, եթե ընտանիքում երեխային հետևողականորեն սովորեցնեն խաղալուց հետո կամ երեկոյան քնելուց առաջ մեծահասակի հսկողությամբ (սկզբնական շրջանում նաև օգնությամբ) հավաքել խաղալիքները կամ իրեն պատկանող իրերը, ապա դա կդառնա կայուն սովորություն: Մանկապարտեզում կամ որևէ տեղ, որը նման է տան պայմաններին, կգործեն նույն կայուն սովորութունները, վարքի ձևերը: Հետագայում նման գործելու միջոցները, ձեռք բերելով ընդհանրացված բնույթ, կփոխանցվեն այլ իրադրություններ, դառնալով կազմակերպվածության, կարգապահության հիմք, կուղեկցեն տվյալ անձին տարբեր տիպի գործունեության մեջ, ի հայտ գալով տարբեր կենսական իրադրություններում:

Վեց տարեկան երեխաների ինքնուրույնության ձևավորման գործընթացի ուսումնասիրությունները թույլ են տվել բացահայտել, որ դրա հիմնական բաղադրիչ մասերն են՝ երեխայի կատարողական ակտիվությունը, ինքնագործունեությունը, ստեղծագործական հակումները: Կատարողական ակտիվությունը ինքնուրույնության համեմատաբար պարզ ձևն է, սակայն այն երեխայից պահանջում է կատարել այնպիսի գործողություններ, որոնք համապատասխանում են մեծահասակի տրված նմուշին: Ինքնագործունեությունը դրսևորվում է այն դեպքում, երբ երեխան առանց նմուշի, ինքնուրույն, սեփական նախաձեռնությամբ սկսում է դրսևորել յուրացրած գիտելիքները կամ ձևավորված հմտությունները: Ինքնուրույնության զարգացման

ամենաբարձր աստիճանը բնութագրվում է նրանով, որ երեխայի գործունեության մեջ հանդես են գալիս ստեղծագործելու տարրեր: Այդ երևույթը չի կարելի համարել ստեղծագործություն բառի բունիմաստով: Պարզապես պետք է հաշվի առնել, որ այն նոր տարրերը, որոնք երեխան ներմուծում է իր գործունեության մեջ, վկայում են նրա ստեղծագործական մոտեցման, ինքնուրույն մտածողության ձևերի առաջացման մասին:

Նախադպրոցականի ինքուրույնությունը, նախաձեռնությունը, ինչպես արդեն նշվեց, արդյունավետորեն զարգանում են համատեղ գործունեության ընթացքում: Ինչպես հմտությունը, կարողությունը, այնպես էլ համատեղ գործելու ունակությունը սկզբնական շրջանում պետք է ձևավորվի մեծահասակի դաստիարակչական ներգործության շնորհիվ: Երեխային պետք է հատուկ սովորեցնել փոխներգոծել հասակակիցների հետ, ինչպես նաև ընդունել հասակակիցի ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը: Մեծահասակը հնարավորություն ունի նման ուսուցման ընթացքում փոփոխել համագործակցության պայմանները, իրադրությունները: Նոր իրադրության մեջ նա կարող է պահպանել արդեն ծանոթ, յուրացված պայմանների տարրերը, որպեսզի երեխաները հեշտությամբ գործեն:

Յուրահատուկ դեր է խաղում <<իմացական ինքնուրույնությունը>>: Երեխայի իմացական ակտիվությունը տարբերվում է ակտիվության, ինքնուրույնության մյուս ոլորտներից: Այն իր արտահայտությունն է գտնում երեխայի իմացական ձգտումների, կարողությունների, ստեղծագործական պրպտումների մեջ: Ինչպես ամեն տիպի,<< իամացական ինքնուրույնությունը>> նույնպես հիմնվում է երեխայի ակտիվության վրա: Այն իրականանում է ինքնուրույն մտածելու, դատելու ունակությունների միջոցով: Այդ ընթացքում երեխայի մոտ զարգանում են նոր իրադրություններում ինքնուրույն կողմնորոշվելու, նոր խնդիրները առանձնացնելու, լուծման միջոցները գտնելու կարողությունները: <<Իմացական ինքնուրույնությունը>> հիմանականում դրսևորվում է երեխաների ուսումնական գործունեության ընթացքում, արտահայտվելով անկախ մտածելակերպում, սեփականատեսակետ ունենալով, մտածողության քննադականությամբ: Այն հանդես է գալիս նաև նրանում, թե ինչպես է երեխան դրսևորում ձեռք բերված գիտելիքները , ինչպիսի արդյունքների է հասնում:

Ինքնուրույնության զարգացման հիմնական գործոններից է այն ունակությունը, երբ երեխան կարողանում է քննադատաբար հարաբերակցել մեծահասակից ստացող

նոր գիտելիքները ինքնուրույնաբար յուրացվածի հետ: Այդ գործընթացը միանշանակ կապված է նրա կամքի ուժի, մտավոր ջանքեր գործադրելու կարողության և այդ ամենին ուղեկցող՝ հույզերի հետ: Ինքնուրույնության դաստիարակությունը հաջողության է հասնում այն դեպքում, երբ երեխայի ոչ թե պարզապես հաղորդում են գիտելիքներ և այդպես ձևավորվում են որոշակի հմտություններ,այլ, երբ դրդում են նրան համարձակորեն դրսևորել դրանք տարբեր իրադրություններրում ու պայմաններում: Փորձի կուտակումը թույլ է տալիս երեխային հետագայում լուծել իր առջև ծառացող մտավոր խնդիրները: Սկզբնական շրջանում, ինչպես նշում է Լ.Ս. Վիգոտսկին, այդ հմտություններն զարգանում են համատեղ գործունեության շնորհիվ, աստիճանաբար դառնալով երեխայի համար մտածելու ներքին միջոց, անհատական ներքին կարողություն: Այս ճանապարհն են անցնում ինքնաբուխ պատկերացումները, տեղեկություններ, որոնք դաստիարակության և ուսուցման ընթացքում դառնում են հիմանավորված գիտական հասկացություններ:

Որոշ գիտնականներ գտնում են, որ ինքնուրույնությունը անձի հասարակական ուղղվածության արտահայտությունն է: Այն արտահայտում է անձի վերաբերմունքը մյու մարդկանց հասարակության նկատմամբ,քանի որ ինքնուրույնության բարձրագույն աստիճանը գիտակցված, հիմնավորված գործունեության հիմքն է դառնում: Այս աստիճանում դրսևորվում է ուրիշի կարծիքից անկախ լինելու հատկությունը, ընդ որում ոչ թե կամակորության , ինքնագոհության ձևով , այլ մարդու՝ հիմնավորված, գիտակցված արարքներում:

Մի շարք արտասահմանյան գիտնականներ ինքնուրույնությունը, անկախ վարքը դիտում են փոխկապակցված ենթարկվելու ունակության հետ: Ազատ դաստիարակության կողմնակիցները ինքնուրույնությունը մեկնաբանում են որպես անկախություն մյուսների կարծիքից, որպես սեփական նախաձեռնության դրսևորում: Ամերիկացի գիտնական Աշը, քննարկելով խմբի և անձի փոխհարաբերությունները, առանձնացրել է անձի՝ խմբին հարմարվելու երեք մակարդակ: Առաջին մակարդակ. անձի ըմբռնումները հարմարվում են խմբի ըմբռնումներին և փոփոխվում դրանց ազդեցությամբ: Ընդ որում անձը անձը դա չի զգում և կամավոր ենթարկվում է խմբի ազդեցությանը: Երկրորդ մակարդակ. անձը ընդօրինակում է խմբում ընդունված գնահատականները գտնելով, որ դրանք ճիշտ են, հիմնավորված: Երրորդ մակարդակ. անձը համամիտ չէ խմբի կարծիքին, գնահատականներին, բայց ունակ չէ դիմադրել,

բախվել խմբի հետ: Այդ դեպքում նա, ներքուստ համաձայն չլինելով, իր գործողությունները ենթարկում է խմբի պահանջներին:

Քննարկելով անկախ մնալու և ենթարկվելու ունակությունների փոխհարաբերությունը, որոշ գիտնականներ յուրովի են մեկնաբանում այն: Նրանք գտնում են, որ միջավայրին հարմարվելու ձևերից մեկը հենց անկախ մնալն է: Կրետչը և Կրատչֆիլդը նշում են, որ հարաբերությունների հավասարակշռությունը կարող է պահպանվել ընդօրինակման կամ անկախության դրսևորման միջոցով: Այլ ուսումնասիրողներ էլ նշում են, որ անհրաժեշտ են այնպիսի միջոցներ և դաստիարակչական ներգործություններ, որոնք կնպաստեն երեխայի ինքնուրույն մտածողության զարգացմանը, կօգնեն պահպանել երեխայի կամքը մեծահասակների և հասակակիցների ճնշող ազդեցություններից: Ազատությունը նպաստում է երեխայի <<ավտոնոմ>> բարոյականության զարգացմանը, որը հիմք է դառնում կայուն անձնային գծերի, ինքնուրույնության, նախաձեռնության ձևավորման: Ստեղծագործական ինքնուրույնությունը պահանջում է ազատ լինել խմբի կամ մեծահասակի ճնշող հեղինակությունից:Հակառակ այդ կարծիքի, Հովինգը, Գուդմենը և ուրիշներ պնդում են, որ ինչքան երեխան մեծանում է, այնքան նրա համար կարևորվում է հասակակիցների կարծիքը: Երբեմն այն ավելի կարևոր է, քան մեծահասակների կարծիքը: Երեխայի մեկուսացումը հասակակիցներից,մյուս մարդկանցից չեն կարող նպաստել նրա ինքնուրույնության և անկախության զարգացմանը: Այլ հարց է, եթե երեխան անկախ է պահում իրեն ոչ հարազատ, օտար սոցիալական ներգործությունների նկատմամբ: Այս դեպքում դա դրական երևույթ է դառնում և վկայում է երեխայի մոտ կայուն վարքի ձևերի և սոցիալական չափանիշների առաջացման մասին:

Ինչպես վկայում են ուսումնասիրությունները, ինքնուրույնությունը հենվում է անձի ակտիվության վրա և կապված է նախաձեռնողականության , անձի անհատական առանձնահատկությունների հետ: Այն ձևավորվում է միջավայրի՝ մեծահասակների և հասակակիցների հետ համագործակցության ընթացքում: Ինքնուրույնությունը որպես անձնային որակ,գիծ, առայանում է նախադպրոցական տարիքում և դաստիարակչական ներգործությունների շնորհիվ զարգանում է՝ դառնալով անձի կայուն հատկություն: Դրա զարգացման արդյունավետությունը կախված է գործունեության բովանդակությունից, մեծահասակի համապատասխան

ներգործությունից, հասակակիցների հետ համագործակցելու կարողությունից,քանի որ նախադպրոցական տարիքի համար հիմնական գործունեությունը խաղն է, որի միջոցով ավելի արդյունավետ են զարգանում երեխայի անձի մտավոր, հուզական, կամային, բարոյական ոլորտները, անձնային տարբեր հատկությունները, համագործակցելու կարողությունները:

Երեխայի ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը զարգանում են ինչպես ինքնաբուխ, այնպես էլ մեծահասակի նպատակաուղղված դաստիարակությամբ:Ավելի հարմար է սկսել դրանց ձևավորումը նախադպրոցական տարիքից, երբ երեխայի անձնային որոշ հատկություններ դառնում են համեմատաբար կայուն:

Ինքնուրույնության, նախաձեռնողականության ձևավորումը կապված է նաև երեխաների պահանջմունքների զարգացման հետ: Երեխայի ամենաուժեղ պահանջմունքներն են հաղորդակցվելու և ակտիվորեն գործելու պահանջմունքները: Նրանք իրենց արտահայտությունն են գտնում երեխայի՝ մեծահասակներին և հասակակիցների հասցեագրված նախաձեռնող, ակտիվ գործողություններում: Նշված պահանջմունքների զարգացումը հանգեցնում է ակտիվ գործունեությանը, համատեղ գործողությունների,որը, իր հերթին, ստեղծում է հուզական հարաբերությունների, դրական կամ բացասական ապրումների հիմքը: Ընտանեկան և հասարակական դաստիարակության համակարգում հատուկ ուշադրություն է դարձվում երեխայի՝ մյուս մարդկանց հետ համագործակցելու ունակությունների ձևավորմանը: Դա պայմանավորված է նրանով, որ կայուն դրական փոխհարաբերությունների ստեղծումը շրջապատի հետ դառնում է նրա կենսագործության գրավականներից մեկը: Կարողանալ հաղորդակցվել մյուս մարդկանց հետ, որոշել իր տեղը համատեղ գործողությունում իր հնարավորություններին համապատասխան, համաձայնեցնել իր գործողությունը մյուսների գործողության հետ և արդարացիորեն լուծել հարաբերություններում առաջացող բախումները, դժվարությունները… ահա թե ինչ է պահանջվում հասուն մարդուց: Բոլոր այս կարողությունները, ունակությունները սկիզբ են առնում նախադպրոցական տարիքում այն դեպքում, եթե ճիշտ են կազմակերպում <<մեծահասակ-երեխա>>, <<երեխա-երեխա>> փոխհարաբորությունները, եթե մեծահասակը համապատասխան ուղղություն է տալիս երեխայի բնական ակտիվությանը ,դաստիարակելով ինքնուրույնությունը,

նախաձեռնությունը: Ինքնուրույնության, նախաձեռնողականության զարգացումը, այսպիսով, կանխորոշվում է շրջապատի վերաբերմունքով: Ամեն մի տարիքային փուլում անձի այդ որակները յուրովի են և պայմանավորված այդ փուլի զարգացման առանձնահատկություններով: Որոշակի դեր են խաղում և երեխայի անհատական առանձնահատկությունները:

Հատուկ առանձնացված է խաղային գործունեությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույնության, նախաձեռնողականության, հասակակիցների հետ ինքնուրույն դրական հարաբերություններ ստեղծելու կարևոր միջոց: Հաշվի առնելով խաղի կարևորությունը երեխայի դաստիարակության համար, մենք ընտրել ենք նախադպրոցական խաղային գործունեությունը որպես այն ոլորտը, որի միջոցով կարելի է բացահայտել երեխաների ինքնուրույնության, նախաձեռնության, հասակակիցների հետ դրական ընկերական հարաբերություններ հաստատելու ունակությունները: Միաժամանակ խաղային գործունեությունը ծառայել է երեխաների ակտիվացմանը, ինքնուրույնության, նախաձեռնության զարգացմանը: Մենք հակված չենք մտածելու, որ միայն ստեղծագործական խաղերի միջոցով, որոնք մեր ուսումնասիրության հիմնական առարկաներն են, կարելի է դաստիարակել երեխաների վերը նշված կարևոր հատկությունները: Նրանց ձևավորումը պետք է իրականացվի նաև արդյունավետ և աշխատանքային գործունեության մեջ, որոնք գալիս են լրացնելու խաղերում իրագործվող դաստիարակչական ներգործությունները:

Երեխայի ինքնուրույնության զարգացմումը պայմանավորված է հետևյալ կարևոր գործոններով՝ մեծահասակի առաջատար դերով և երեխայի անձնական ակտիվության, նախաձեռնողականության զարգացմամբ: Ինքնուրույնության շարժիչ ուժն է դառնում այն հակասությունը, որը ստեղծվում է նախադպրոցական տարիքին բնորոշ երկու հիմնական մղումներից՝ գործել ինքնուրույն, անկախ մեծահասակից, բայց լինել մեծահասակի նման և օբյեկտիվ հնարավորությունների միջև: Այդ հակասությունը լուծվում է երեխայի դաստիարակության և զարգացման ավելի բարձր տարիքում, երբ երեխան հմուտ է և տիրապետում է կարողությունների, գիտելիքների ավելի լայն շրջանակի:

Նախադպրոցական դաստիարակության մեջ միահյուսված են երկու ուղղություններ: Առաջինը՝ երեխային ներգրավել մեծահասակների գործունեությանը: Երկրորդը՝ մեծահասակների հետ համատեղ գործունեության ընթացքում զարգացնել

երեխայի ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը ու ակտիվությունը: Նշված կամային հատկությունների ձևավորման հետ զուգահեռ գոյանում է նաև պատասխանատվության զգացողությունը: Մանկության տարիներին ինքնուրույնության զարգացումը որոշ գիտնականներ կապում են ընդօրինակման հետ: Հաստատված է, որ վաղ տարիքում երեխայի պահանջմունքներից է մեծահասակի հետ իմացական համագործակցությունը: Այդ ակտիվ պահանջմունքի իրականացումն արտահայտվում է մանիպուլյատիվ (ձեռնածական, արարչական ) և կողմնորոշման գործողությունների արդյունավետ զարգացմամբ:

Այսպիսով, նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույնությունը դիտվում է որպես հավաքական անձնային հատկություն, այսինքն՝ սեփական կամքով գործելու ցանկությանը: Սեփական կամքով գործելու ցանկության հետ են կապված անկախ վարքը, որը արտահայտվում է առանց մեծահասակի օգնության գործը ավարտին հասցնելու ձգտումով, ինչպես և պատասխանատվությունը, որն արտահայտվում է իր գործունեության սոցիալական նշանակությունը գիտակցելու, գործողությունների և արարքների համար պատասխան տալու կարողություններով:

## 1.2 Նախադպրոցականի ինքնուրույնության դրսևորման մանկավարժական վերլուծությունը գործունեության տարբեր ձևերում

Ինքնուրույնությունը որպես ձևավորվող անձնային հատկություն իր զարգացման ընթացքում անընդհատ որակապես փոփոխվում է: Այդ փոփոխությունները պայմանավորված են մանկան գործունեության բնույթով, երեխային առաջարկվող մանկավարժական պայմաններով և մեծահասակների ուղղորդման, աջակցության առկայությամբ:

Միջին և ավագ նախադպրոցականի ինքնուրույնությունը և պատասխանատվության աստիճանը լավագույնս երևում է դպրոցական ուսումնառության շեմին, երբ երեխան նախադպրոցական տարիքից պատրաստվում է անցում կատարել կրտսեր դպրոցական տարիքի, երբ ընդօրինակվող արտաքին գործողություններին փոխարինելու են գալիս ներքին գործողությունները, և այդ գործընթացում, բնականաբար, դրսևորվում են երեխայի անձնային անհատական առանձնահատկությունները: Եթե երեխայի վարքագիծը ինքնուրույն է և

պատասխանատու, ապա նա գիտակցում է դպրոցում նոր գիտելիքներ և ընկերներ ունենալու անհրաժեշտությունը, հետևաբար ցանկանում է գնալ դպրոց: Հակառակ դեպքում՝ նա վտանգներ է տեսնում և չի ցանկանում սոցիալական կարգավիճակի փոփոխություններ: Նա չի պատկերացնում, թե ինչ է իրեն սպասվում նոր միջավայրում:

Երեխայի ինքնուրույնության ձևավորմանը մեծապես նպաստում են հաղորդակցման կարողությունները, որոնք ձեռք են բերվում մանկան գործունեության տարբեր ձևերում՝ դաստիարակի անմիջական մասնակցությամբ:

Հաղորդակցումը՝ համատեղ գործունեության կարևորագույն մասն է կազմում: Հաղորդակցումն անհրաժեշտ է երեխայի անձնավորության զարգացման համար: Հաղորդակցումը նպաստում է միջավայրին հարմարվելուն , իր գործողությունները մյուսների գործողությունների հետ հարաբերակցելու կարողության զարգացմանը: Դրա շնորհիվ են երեխայի մոտ առաջանում պատկերացումներ մյուս մարդկանց, նաև իր աձի մասին:

Ե. Օ. Սմիրնովան նշում է, որ ավագ նախադպրոցական տարիքում զգալիորեն փոխվում է երեխաների վերաբերմունքը հասակակիցների նկատմամբ: Եթե մինչ այդ մեծահասակի միջոցով էր երեխան իրեն գնահատում, գիտակցում, ապա 4-5 տարեկանից հասակակիցների ընկալումները, կարծիքները սկսում են կարևոր դեր խաղալ երեխայի ինքնագնահատման գործում: Ինքնագնահատման կարողությունն է նպաստում սեփական գործողությունների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը: Ինքնուրույնության և պատասխանատվության զարգացմանը մեծապես նպաստում են ստեղծագործական խաղերը: Ավագ նախադպրոցականներն ընտրում են բարդ սյուժեներ, խաղի ընթացքում այն լրացնում են, հարստացնում, բացի խաղալիքներից օգտագործում են նաև օժանդակ իրեր, նյութեր: Նման կարողությունների և ունակությունների զարգացումը կապված է ինքնուրույն գործելու, դժվարությունները ինքնուրույն հաղթահարելու ընդունակությունների հետ:Միջին նախադպրոցականները ինքնուրույն հոգ են տանում ընտրելու խաղալիքները, խաղային առարկաները, հաճախ կառուցում են անհրաժեշտ կառույցներ:

Միջին նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույնության, ակտիվության դրսևորումները արդյունավետ են և աշխատանքային գործունեության

ընթացքում: Պարզվում է, որ երբ երեխաներն ընկալում են մեծահասակի առաջադրանքը և կենտրոնանաում են դրա կատարման ժամանակ, նրանք արագությամբ են սկսում գործել, նպատակաուղղված են կատարում գործողությունները, գիտակցում և վերլուծում են իրենց աշխատանքի արդյունքները:

Առաջադրանքը ստանալուց հետո ինքնուրույն երեխան սկսում է անմիջապես գործել, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հաղորդակցվել հասակակիցների և մեծերի հետ: Ինքնուրույնության դրսևորում է համարվում նաև գործելու ինքնատիպ միջոցների ընտրությունը, ինքնագործունեության տարրերի ներմուծումը խնդրի ստեղծագործական լուծման մեջ:

Միջին նախադպրոցական տարիքի երեխաները հիմնականում կարողանում են անմիջապես կենտրոնանալ՝ խնդիրը լուծելու նպատակով, արագ ընկալում են առաջադրանքը և սկսում աշխատել: Այս տարիքում անհատական առանձնահատկությունները դրսևորվում են, երբ պահանջվում են երկարատև կենտրոնացում և գործողությունների նպատակաուղղվածություն, ինչպես նաև գործունեությունը ծրագրելու, դրա արդյունքները կանխատեսելու ունակություններ:

Համեմատաբար բարդ առաջադրանքներն ավելի են ակտիվացնում Միջին նախադպրոցական տարիքի երեխաների նախաձեռնողականությունը, ինքնուրույնությունը: Նախադպրոցական տարիքի , մասնավորապես միջին և ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույնությունն ու պատասխանատվությունը կրում են, հիմնականում, իրադրային բնույթ: Երեխայի առջև դրված խնդրի բարդությունից և բովանդակությունից կախված, նրանք կարող են տատանվել, փոփոխել գործողությունները: Այն առաջադրանքների կատարման ժամանակ, որոնց բովանդակությունը քիչ թե շատ ծանոթ է երեխային, նրանց մոտ բացահայտվում են կատարողական ունակություններ, ընդօրինակում, ուժերի և ջանքերի ցածր լարվածություն: Պարտաճանաչ և աշխատասեր երեխաները պարապմունքների և տարբեր գործողությունների ժամանակ դրսևորում են բարեխղճություն, կարգապահություն:

Միջին նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույնությունն անհամեմատ բարձր է լինում, եթե նրանց առջև դրվում է հանրօգուտ մի նպատակ, և եթե հնարավորություններ են ստեղծվում ստեղծագործելու, նոր տարրեր կիրառելու առաջադրանքների կատարման ընթացքում: Ընդունելով խաղը որպես

ինքնուրույնության, հետևաբար և պատասխանատվության ձևավորման հիմնական և նպատակահարմար միջոց, մանրամասն անդրադառնանք սյուժետադերային խաղերին:

Նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույնության զարգացումը սյուժետադերային խաղերի ժամանակ դառնում է հնարավոր, եթե ընդլայնվում, հարստանում և զարգանում է սյուժեն, լայն հնարավորություններ են ստեղծվում երեխաների խաղային հաղորդակցման համար: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մանկավարժական իրադրություններ, կիրառել այնպիսի ներգործություններ, որոնք կնպաստեն խաղացող երեխաների ստեղծագործական ակտիվության և ինքնագործունեության զարգացմանը: Երեխաների ստեղծագործական ակտիվության դրսևորումը հնարավոր է դառնում այն դեպքում, երբ նրանց առջև դրվում է սոցիալական դրդապատճառ ունեցող որևէ խնդիր:

Նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատող գրեթե բոլոր մասնագետները նշում են, որ երեխաների ինքնուրույնության զարգացումը խաղերի միջոցով անհրաժեշտ է զուգակցել մանկան գործունեության այլ ձևերով, մասնավորապես՝ աշխատանքային և ուսումնական: Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույնության դաստիարակությունը կապված է նաև երեխաների հուզական շահագրգռվածության հետ: Նման վերաբերմունք դաստիարակելու համար երեխաների հետ կարելի է անցկացնել համապատասխան զրույցներ, նրանց ուշադրությունն ուղղել ընկերների դժվարությունների վրա, բացատրել, որ անհրաժեշտ է օգնել խմբի որոշ երեխաների, որպեսզի նրանք կարողանան հետագայում ինքնուրույն կատարել առաջադրանքը: Անհրաժեշտ է խրախուսել ընկերներին օգնող երեխաներին , գնահատել նրանց արարքը բոլոր երեխաների ներկայությամբ:

Երեխաների ինքնուրույն վարքի ձևերի ամրապնդման համար կարելի է այնպես առաջադրել խնդիրը, որ նրանք անավարտ չթողնեն իրենց աշխատանքը:

Միջին նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույն վարքի ձևավորումը կապված է նաև մի շարք արտաքին և ներքին պայմանների հետ: Արտաքին պայմաններն են այն իրադրությունները, որոնք ստեղծվում են ինքնաբուխ կամ նպատակային՝ դաստիարակի կողմից: Ներքին պայմանները վերաբերում են երեխաների ձգտումներին, հետաքրքրություններին, վերաբերմունքին, ռեֆլեքսիայի

ունակությանը: Կարևոր դեր են խաղում նաև մեծահասակի դաստիարակչական ներգործությունները, որոնք ուղղված են նախադպրոցականների կայուն ինքնուրույն վարքի ձևավորմանը:

Ինքնուրույնության զարգացմումն առավել արդյունավետ տարբերակ է նաև ստեղծագրծական գործունեության ձևերից ոչ ավանդական նկարչությունը,որը երեխայի մեջ զարգացնում է հմտություններ, որոնք օգտակար կլինեն հասուն տարիքում: Նկարչությունը զարգացնում է երեխայի որոշումներ կայացնելու հմտությունները:Նոր գաղափարների կիրառման փորձերը ստիպում են երեխային քննադատաբար մտածել և որոշումներ կայացնել,քանի որ այս գործընթացում երեխան պետք է ընտրություն կատարի և գտնի իր համար ամենահարմար աշխատանքի տարբերակը:Հետագայում, այս հմտությունը պարզապես ստեղծագործելու՝նկարելու տիրույթից տեղափոխվում է կյանքի շատ այլ ոլորտներ:

Ինքնուրույնության զարգացմումն առավել արդյունավետ է հետևյալ դրդապատճառների առկայության պարագայում՝ պատասխանատվության զգացումի, հաջողության հասնելու ցանկության, հասակակիցների հետ համագործակցելու մղումի, դրական գնահատական ստանալու: Ինքնուրույնության զարգացումը ազդում էր նաև երեխաների ու մեծահասակների փոխհարաբերությունների վրա: Երեխաները սկսում են գործել ավելի ակտիվ, անկախ, ավելի քիչ են դիմում մեծահասակի օգնության, որը, հիմնականում, հանդես է գալիս խորհրդատուի դերում:

Միջին նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույնության և միաժամանակ պատասխանատվության զարգացումը մեծապես նպաստում է նրանց աշխատանքի արդյունքների հուզական կանխատեսմանը, միջավայրի հանդեպ գիտակից վերաբերմունքի ձևավորմանը::

Միջին նախադպրոցական տարիքի երեխաների տարբեր ձևերով դրսևորվող ինքնուրույնությունն ու պատասխանատվությունը նպատակաուղղված ներգործությունների արդյունքում դառնում են անձի կայուն որակներ:

# ԳԼՈՒԽ 2 ՄԻՋԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ, ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Միջին նախադպրոցական տարիքում էականորեն աճում է երեխայի նախաձեռնողական ակտիվության հնարավորությունները: Այս տարիքային փուլը շատ կարևոր է երեխայի իմացական պահանջմունքների և ճանաչողական հետաքրքրությունների զարգացման համար, որն իր արտահայտությունն է գտնում փորձարարական գործունեության մեջ, որի արդյունքում զարգանում է երեխայի տրամաբանական, վերլուծական մտածողությունը: Ինչպես նշում են հոգեբանները երեխայի զարգացման համար վճռորոշ նշանակություն ունի ոչ թե գիտելիքների ծավալի չափը, այլ դրանց յուրացման, ձեռքբերման մանկավարժական պայմանները, ձևերն ու միջոցները:

Ողջ նախադպրոցական տարիքի ընթացքում, խաղային գործունեության հետ մեկտեղ երեխայի անձի զարգացման գործում մեծ կարևորություն ունի իմացական գործունեությունը, որն ընկալվում է ոչ միայն գիտելիքների, հմտությունների և կարողությունների տիրապետման գործընթաց, այլև որպես գիտելիքների որոնման, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման, աշխարհընկալման, ինքնաճանաչման գործընթաց: Երեխաների մեջ նկատվող ինտելեկտուալ պասսիվության պատճառները նրանք իմացական կարողությունների, ճանաչողական հետաքրքրությունների սահմանափակությունն է: Հարկ է նշել, որ երբ երեխաները տրված մաթեմատիկական առաջադրանքները, հանձնարարությունները դժվարանում են կատարել օգնության է հասնում խաղային հնարների կիրառումը, այսինքն, գործնական իրավիճակների ստեղծումը հնարավորություն է տալիս նյութի լիարժեք և համակողմանի յուրացմանը:

Դրա հետ կապված մեծ հետաքրքրություն է ներկայացնում փորձարարական գործունեության կազմակերպումը:

Այդ ընթացքում երեխան ճանաչում է տվյալ առարկան, վերջինիս հետ որոշակի գործողությունների ընթացքում, որոնք իմացական, հետազոտական բնույթ ունեն: Այն համապատասխան պայմաններ է ստեղծում տվյալ առարկայի կամ երևույթի բովանդակությունը կազմող տարրերի բացահայտման համար: Նոր

տպավորություններ ստանալու երեխաների պահանջմունքը հիմք է հանդիսանում փորձարարական գործունեության ստեղծման և զարգացման համար, որն էլ ուղղված է շրջապատող միջավայրի, առարկաների, երևույթների ճանաչմանը:

Որքան բազմազան ու հետաքրքիր է փորձարարական գործունեությունը, այնքան ամբողջական ու արագ է այն զարգանում: Որոնողական գործունեությունը սկզբունքորեն տարբերվում է գործունեության բոլոր տեսակներից նրանով, որ այդ գործունեությունը պայմանավորող նպատակների կերպարը ինքնին դեռ ձևավորված չէ և բնութագրվում է անորոշությամբ:

Որոնողական գործունեության ընթացքում այն ճշգրտվում է, հստակեցվում և հատուկ դրոշմ թողնում հետազոտական գործունեության մեջ մտնող բոլոր գործողությունների վրա:

Ն.Ն.Պոդդյակովը նախադպրոցական տարիքի երեխաների մեջ առանձնացնում է կողմնորոշիչ-հետազոտական գործունեության երկու տեսակ: Առաջինը բնութագրվում է նրանով, որ գործունեության ընթացքում ամբողջովին բխում է երեխայից, նա հանդես է գալիս որպես վերջինիս լիիրավ սուբյեկտ, ով ինքնուրույն է կառուցում իր գործունեությունը՝ որոշում դրա նպատակը, դրանց հանդես գալու ելքերն ու միջոցներն է որոնում և այլն: Այս կերպ փորձարարության ընթացքում երեխան բավարարում է իր պահանջմունքներն ու հետաքրքրությունները:

Կողմնորոշիչ-հետազոտական գործունեության երկրորդ տեսակը կազմակերպվում է մեծահասակի կողմից, որը առանձնացնում է իրադրության էական տարրերը, երեխային գործողությունների որոշակի ալգորիթմն է սովորեցնում:

Այսպիսով, երեխան ստանում է այն արդյունքները, որոնք նախապես որոշված էին մեծահասակի կողմից:

Միջին նախադպրոցական տարիքի երեխաների իմացական ոլորտը զարգանում է ոչ միայն մեծահասակների նպատակաուղղված ղեկավարման դեպքում, այլև ազատ, ինքնուրույն գործունեության ընթացքում: Մտածողության գործընթացը ենթադրում է ոչ միայն գործողության պատրաստի հնարներ և մշակված սխեմաներ, այլև նորերի/իհարկե երեխայի հնարավորությունների սահմաններում/ ձևավորում: Իմացական մոտիվացիայի և ակտիվության զարգացման գլխավոր ուղիներից մեկն է հանդիսանում փորձարարական գործունեությունը: Մտածողության տվյալ տեսակը

ակնառու-գործնական և ակնառու-պատկերավոր մտածողության միասնությունն է և ուղղված է առարկայի անմիջական դիտումներից թաքնված հատկությունների և կապերի բացահայտմանը: Մեծահասակը գործունեության այդ տեսակը չի հանձնարարում՝ երեխան այն ինքնուրույն է իրականացնում:

Թե՛ մեծահասակի և թե՛ երեխայի հետազոտությունը ուղղված է առարկաների հատկությունների, գործառույթների և նրանց միջև գոյություն ունեցող կապերի ուսումնասիրմանը և իրականացվում է որպես այս կամ այն երևույթի կառավարում: Հետազոտության ընթացքում երեխան ձեռք է բերում այս կամ այն երևույթը դադարեցնելու, առաջ տանելու, կամ որևէ ուղղությամբ փոփոխելու կարողություն, երբեմն ստանալով անսպասելի տեղեկատվություն գործնական կապեր է հաստատում սեփական գործողությունների և շրջապատող միջավարի երևույթների միջև, այսինքն իրականացվում է բացահայտում: Տվյալ գործունեության մեջ ակնառու կերպով ներկայացվում է ինքնազարգացման պահը՝ վերակառուցման արդյունքում առարկաները բացահայտվում են իրենց նոր հատկություններով, և հնարավորություն են տալիս երեխային կատարելու ավելի բարդ վերակազմավորումներ:

Մեծահասակի դերը այդ գործընթացի մեջ այն է, որ երեխային ցույց տա ոչ միայն գործողությունները կատարելու եղանակները, կամ ղեկավարելու նրա գործողությունները, այլև խթանի նրա հետաքրքրությունները առարկաների նկատմամբ՝ երեխայի մեջ առաջացնի հետաքրքրություն և իմացական ակտիվություն:

- Բացառել քննադատությունը, որը կանխում է ստեղծագործելու հնարավորությունը, պետք է խուսափել երեխաների մտքերը, բացատրությունները քննադատելուց:
- Դրսևորել հետաքրքրություն երեխայի ցանկցած գործողության հանդեպ:
- Երեխաների մեջ վստահություն առաջացնել սեփական ուժերի նկատմամբ:
- Դաստիարակել առաջադրանքը կատարելու համառություն, աշխատանքն ավարտին հասցնելու կարողություն:
- Ամփոփել աշխատանքի արդյունքները, մանկավարժը կարող է հուշող հարցեր տալ և ուղղորդել երեխաներին ճիշտ գնահատել սեփական աշխատանքը և կատարել եզրահանգում:

Երբ փորձարարական գործունեությունը ավարտվել է և եզրակացություններն էլ կատարվել են, կարելի է երեխաներին տալ հետևյալ հարցը՝ «Ինչպե՞ս պարզել, թե մեր կատարած եզրահանգումները ճիշտ են թե ոչ», այնուհետև երեխաներին օգնել հանգելու այն գաղափարին, որ հետազոտության արդյունքները հավաստի են:

# ԳԼՈՒԽ 3. ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

## 3.1 Փորձարարական հետազոտության նպատակը, խնդիրները

Վերջին տարիներին ինքնուրույնության ձևավորման ուսումնասիրությունները նախադպրոցական տարիքից սկսած ձեռք են բերել կրկնակի ուժգնություն և նոր ուղղվածություն:

Մերօրյա սերունդը էապես տարբերվում է նախորդներից: Նրանք տարբերվում են թե՝ իրենց հակումներով և նախասիրություններով, թե՝ դաստիարակող մեծահասակների ներգործություններն ընկալելու պատրաստակամությամբ: Բավականին նվազել են նաև հասակակիցների հետ շփվելու հնարավորությունները: Նախկինում հարազատների և ընկերների երեխաների հետ հանդիպումները հաճախակի բնույթ էին կրում, իսկ այսօր մարդիկ, հիմնականում, զբաղված են ներընտանեկան հոգսերով: Նշվածին գումարելով ներկայիս ծնողների զբաղվածությունն ու երեխաների հետ հաճախակի շփվելու անհրաժեշտության անտեսումը, կարելի է արձանագրել, որ որոշ չափով վտանգված է երեխայի կարևորագույն անձնային հատկությունների զարգացման գործընթացը:

Մեր կողմից անցկացրած փորձարարության **նպատակն է** ուսումնասիրել միջին նախադպրոցականների ինքնուրույնության դրսևորման առանձնահատկությունները և փորձարկել առաջարկվող մանկավարժական աշխատանքի ուղիները:

Միջին նախադպրոցական տարիքում ինքնուրույնության ձևավորման մանկավարժական պայմանների մշակման ընթացքում հիմք ենք ընդունել ժամանակակից նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության հետևյալ դրույթները.

- ինքնուրույնությունը ՝ անձնային կարևորագույն որակ է, որի նախադրյալները ձևավորվում են նախադպրոցական տարիքում, իսկ առաջին դրսևորումներն ի հայտ են գալիս ավագ նախադպրոցականների վարքագծում և գործունեության ընթացքում;
- Ինքնուրույնությունը միջին նախադպրոցական տարիքում գոյանում է կամային մի շարք հատկությունների ձեռքբերման արդյունքում;
- Ինքնուրույնության ձևավորումը՝ նպատակային մանկավարժական աշխատանք ենթադրող գործընթաց է:

Հիմնախնդրի շուրջ եղած գիտական հոգեբանամանկավարժական գրականության վերլուծության միջոցով մեր կողմից առանձնացվել են միջին,ավագ նախադպրոցական տարիքի երեխաներին բնորոշ Ինքնուրույնության հետևյալ բաղադրիչները.

- ինքնուրույնությունը որպես պատասխանատու վերաբերմունքի հիմք և գլխավոր նախադրյալ;
- նախաձեռնողականությունը որպես ինքնուրույն գործունեությունն ուղղորդող չափանիշ;
- նպատակասլացությունն իբրև ինքնուրույն գործունեության արդյունքների արձանագրման երաշխիք;
- ինքնագնահատման կարողությունը;
- սեփական գործողությունները վերլուծելու կարողությունը:
- Ինքնավերլուծության /ռեֆլեքսիայի/ կարողությունների մակարդակը որոշելու համար անցկացրել ենք «**Նախադպրոցականի ինքնագնահատում**» թեստը**:** Թեստը կազմված է աղյուսակից, որտեղ նշված են մի շարք անձնային որակներ: Երեխային ուղղելով հետևյալ հարցը. « Դու կարգապահ ես (ազնիվ և այլն)» , նրա պատասխանը նշել ենք համապատասխան սյունակում:

- Արյունքները գնահատվում էին հետևյալ կերպ՝ "այո" պատասխանը գնահատվում է 2 միավոր, "ոչ" պատասխանը՝ 0 միավոր, "չգիտեմ" պատասխանը՝ գնահատվում էր 1 միավոր:
- Երեխայի ինքնագնահատականը որոշվում էր անձնային նշված որակների միավորների ընդհանուր գումարով.
- 10 միավոր-շատ բարձր
- 8-9 միավոր-բարձր
- 4-7 միավոր-միջին
- 2-3 միավոր- ցածր
- 0-1 միավոր-շատ ցածր

| | Դու կարգապա՞հ ես | Դու ազնի՞վ ես | Դու ընկերասե՞ր ես | Դու կռվարա՞ր ես | Դու հայրենասե՞ր ես |
|---|---|---|---|---|---|
| Ալլա | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Ամալյա | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Անահիտ | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Անժելա | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Անի | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Աննա | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Աշոտ | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Առնո | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Աստղիկ | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Արամ | Չգիտեմ | Այո | Այո | Ոչ | Այո |
| Արման | Չգիտեմ | Այո | Այո | Ոչ | Այո |
| Արմեն | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Արմինե | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Արսեն | Այո | Այո | Այո | Այո | Այո |
| Գևորգ | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Դավիթ | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Դիանա | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Եվա | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Լիլիթ | Չգիտեմ | Այո | Այո | Ոչ | Այո |
| Լուսինե | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Կարեն | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Կարո | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Հայկ | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Հովիկ | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Մազա | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Մարի | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Մարիամ | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Մարիանա | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Միլենա | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Միքայել | Չգիտեմ | Այո | Այո | Այո | Այո |
| Նարե | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Նարեկ | Չգիտեմ | Այո | Այո | Այո | Այո |
| Նվարդ | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Սարգիս | Չգիտեմ | Այո | Այո | Ոչ | Այո |
| Սիլվի | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| Սոֆի | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |

Ինչպես երևում է արդյունքների վերլուծությունից հետազոտվող երեխաների մեծ մասն ունի շատ բարձր կամ բարձր ինքնագնահատական: Այս երեխաները իրենցից գոհ էին: Նրանք գիտեին իրենց ուժեղ կողմերը, վստահ էին սեփական ուժերի մեջ: Սակայն, ինքնավստահությունը հաճախ օբյեկտիվ չէր, չէր համապատասխանում գործողություններին:

***Ստորև ներկայացնում ենք նաև փորձարարության ընթացքում անցկացրած պարապմունքի սեղմագիրը***

**Տեսակը** `----------Ստեղծագործական `ոչ նավանդական նկարչություն

**Թեման** `---------- Ձյան փաթիլ

**Նպատակ**`---------- Ձևավորել ինքնուրույն որոշումներ կայացնելու հատկություն,սկսած աշխատանքը ավարտին հասցնելու կարողություն:

**Խնդիր**`----------Շարունակել ծանոթացնել ոչ ավանդական նկարչության տեխնիկաներին `կնիքով ,տերևներով կափարիչով ,բամբակյա ձողերով և այլն

**Վերջնարդյունք**` ----- կկիրառի ոչ ավանդական տեխնիկաներ,կնկարի բնության երևույնթներ,նկարելիս կօգտագործի տարբեր նկարչական նյութեր:

**Կապը կրթական չափորոշչի հետ** `------Շ/թ/, ԽՀ/բ,գ,ը,թ/,Ի/բ,գ,դ/, ՀՍԱ/ա,բ,գ,դ,է/,ԻԱԱ/ա,բ,ե,զ,ը/

**Խթանման փուլ.**

- ՈՒղղել երեխաներին բաց և փակ հարցեր
- Կիրառել մտագրոհ մեթոդը

**Իմաստի ընկալման փուլ.**

- Ցուցադրել երեխաներին բամբակյա փայտիկներն իրար միացնելու,ինչպես նաև առանձին բամբակյա ձողիկով փաթիլ նկարելու քայլերի հաջորգականությունը:

**Կատարել ֆիզ.րոպե**

**Կշռադատման փուլ**

- Դիտել երեխաների աշխատանքները,կազմակերպել քննարկում
- Կիրառել <<Աստղաթափ>> մեթոդը:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ընդհանրացնելով միջին նախադպրոցականի ինքնուրույնության ձևավորման վերաբերյալ տեսական դրույթները և մեր փորձարարական աշխատանքի արդյունքները, կարելի է եզրակացնել՝

1. Նախադպրոցական տարիքում աստիճանաբար զարգանում է երեխայի ինքնուրույնությունը, ձևավորվում է հպարտություն սեփական ձեռքբերումների համար, նշված հատկությունն օգնում է միջին նախադպրոցականին գնահատել ինքն իրեն և պատասխանատու լինել իր գործողությունների համար:
2. Միջին նախադպրոցական տարիքը՝ երեխայի կամային հատկությունների ձեռքբերման որոշիչ շրջափուլերից է: Այս տարիքում են ձևավորվում և հետագայում դրսևորվում այնպիսի կամային հատկություններ, ինչպիսիք են ինքնուրույնությունը, նպատակասլացությունը, գիտակցված կարգապահությունը, նախաձեռնողականությունն ու պատասխանատվությունը:
3. Փորձարարական հետազոտության ընթացքում եկանք այն եզրահանգման, որ միջին նախադպրոցական տարիքի երեխաների ինքնուրույնության ձևավորմանը նպաստում է ազատ հաղորդակցումը միմյամց հետ, որը բնորոշվում է որպես ակտիվ փոխներգործություն:
4. Երեխաների ակտիվ փոխներգործությունը կարելի է խթանել համալիր պարապմունքների ընթացքում,կերպարվեստային գործունեության տարբեր ձևերով՝մասնավորապես այլընտրանքային՝ոչ ավանդական նկարչությամբ,որը խթանում է երեխաների երևակայությունը,ինքնուրույնությունը:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Дуброва, В.П. Воспитание самостоятельности у дошкольника в семье [Текст] : методические рекомендации. / В.П. Дуброва. - М.: Просвещение, 1985. - 220с.
2. Кузавкова, К.П. Формирование общественно-направленной самостоятельности у детей дошкольного возраста [Текст] : учебное пособие для спец. курса / К. П. Кузавкова. – Пермь, 1975. - 57с.
3. Նյութեր համացանցից
   http://raguda.ru/ns/razvitie-samostojatelnosti-u-detej-mladshego.html
   http://raguda.ru/ou/razvitie-samostojatelnosti-u-detej-doshkolnogo.html
   http://vospitateljam.ru/razvitie-samostoyatelnosti-u-detej-starshego-doshkolnogo-vozrasta-na-zanyatiyax-po-ruchnomu-trudu/